


Ասրաւ

ՏԺԿԸՑԻԿ



ԹԵՏՐՈՒՍ 1937'

30 MAY 2011

891.9915

Հ-81

Ա Տ Ր Պ Ե Տ

ԿԴ.

ԲՅ Բ

ՏԺՎԼԺԻԿ

Նկարմերը

ՀՈՎՀ. ՇՈՎՈՐՃԻ

Թ Ե Տ Շ Պ Ա Տ
ՀԵԿԵՐ ԿԿ ԿԿ ՄԱՆԿԱՄԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՅՑԱՆ ԲԱԺԻ
ՅԵՐԵՎԱՆ
1929

7098

21.02.2013

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

В052401



8270-53

Սրանից շատ տարի առաջ Երզրումի մեջ ապրում ե-
յին տնանկ Ներսես-ախալարնում էծ կարողության տեր
Նիկողոս-աղան: Վերջինս կ. Պոլսում յերկար ապ-
րած լինելով՝ լավ հունարեն գիտեր, այդ պատճառով
ել կարնեցիք նրան մյուս Նիկողոս աղաներից զանազա-
նելու համար, Ուսում Նիկողոս եյին կանչում:

Ներսես ախալարն ել ժամանակին շատ հարուստ ե
յեղել, մեծ ոջախի վորդի, խոսքը փաշաների, վեզիրնե-
րի քով անց, բայց չարաշար ձախորդությունների յե
հանդիպել: Նրա ապրանքների կարավանները կ. Պոլ-
սի, Դամասկոսի ճանապարհների վրա ավարի յեն
ժամանվել ավագակների ձեռքը, նավերը Սև ու Միջեր-
կրական ծովերում ծովահենների ձեռքն ե անցել, վոչ-
խարների հոտերը քշել տարել են, իսկ քաղաքում ունե-
ցած ապրանքների մթերանոցները և հացի շտեմարան-
ները կրակի եյին տվել, վառել նրա հակառակորդները:
Այնպես քայլքայվել եյին նրա մյուլքերը, խաները, խա-
նությունները, վոր բոլորի հիմքն արեգակն եր յելել, այս
ու այն յեկել, բռնի տիրացել ու իրենց համար կալված-
ներ եյին շինել: Ներսես-ախալարն այնպես մոլորվել,
այնպես հուսահատվել եր, վոր ամեն բան՝ ապրելը,
կյանքն անդամ տչըից ընկել եր, զղվել չարասիրտ դրա-
ցիներից և տանջանքով քաշքավում եր:

Թեև գլուխ է ամեն, բայց մեծության նշան-
ները դեռ յետու եյին եր առաջին տեսքից.
իսկ ինքն ել թեև հին հապաւստ եր հագնում, մաշված
ու մաղված, ու ժամանակին այդ շորերն ինչ թան-
կագին կերպառ երի կազմված լինելը հայտնապես

նշմարվում եր: Նա ծերացել, կորացել, դեմքը կնճիռ-ներով ծածկվել եր, բայց վեհ հոգին դեռ չեր կորցրել: Խեղճ եր, աղքատ եր Ներսես-ախսպարը, դրացիների, բարեկամների նպաստներին կարոտ, բայց յերբեք նա չեր մուրացել, և յերբեք չեր զիջել վողորմություն խնդրելու և ուրիշների մյուննաթներով չեր ապրել:

Մի որ բազարում Նիկողոս-աղան մսագործի խանութի առաջ պատահեց Ներսես-ախսպորն ու նրա համար տասը փարայի ($1\frac{1}{2}$ կոպ.) մի վոչսարի թոք գնելով՝ ասաց.

— Ներսես-ախսպա՛ր, այս թոքն ել դու տար ձեր տուն:

— Ծնորհակալ եմ, ասաց Ներսես-ախսպարն ու թոքը մսագործի ձեռքից առնելով՝ Նիկողոս-աղայի հետ վերադարձան իրենց տները: Նիկողոս-աղան մի շախկամիս եր առել, ամբողջ զմակն ել հետը, տվել եր ծառայի կոնակը, վոր յետևից գալիս եր, իսկ Ներսես-ախսպարն ել համեստարար մի քայլ հետ ընկած հետեւում եր Նիկողոս-աղային:

Յերբ չուկայից դուրս յեկան, Նիկողոս-աղան ասաց Ներսես ախսպորը, փորձված մարդու խրատականի շեշտով.

— Դիտես, քրոջս (այսինքն Ներսեսի կնոջը) ասա՛, թող թոքերի, սրտի ճարպերն առաջ սուր դանակով լավ մաքրե, հետո այդ ճարպը կրակի վրա, սկավառակում հանդարտ հալեցնե, մի որ այդ ճարպի մեջ սպիտակ թոքերը տապակե, մյուս որը՝ սկը, և յերրորդ որը՝ սիրտը: Պատվիրիր, վոր լավ մանրե թոքերը, թե չե՞տմվրդիկը համով չի լինիլ: Դիտես, Ներսես-ախսպար, մենք բարեկամ ենք, այդ պատճառով բարեկամական խորհուրդ եմ տալիս: Առ տեսնում ես, թե վորքա՞ն դժվար է մի բան առնելն ու տանելը: Կես կյանքդ մաշվում ե, հապա վորքա՞ն դժվարությամբ ե մարդ տասը փարա աշխատում: Գետք ե տնտեսությամբ ապրել, առամներից պետք ե ավելացնել, յետ ձգել: Ասա՛ քրոջս (կնոջը) թող կրակը մեղմ վառե, վոր ճարպը չսեանա-



ու չփչանա, վայսին ել խնայողություն կլինի, կերաս-
կրի ել համը չի կորչի և սեղան բերելիս՝ թող ճարպը
լավ քամե, պահե, վոր մյուս որվան տապկոցին բանաց-
նե: Դեռ յեթե լավ տնտես լինի մարդու կինը, կարդին
տնարար, տժվը իկի յեղն այնպես խնայողությամբ կը ա-
նացնե, վոր չորրորդ որը նրա մեջ կարողանա բիշի յեփել
և մանր ու խոշորին կշտացնել: Տժվը իկը շատ համով
բան ե, բայց հարկավոր ե լավ, զգուշությամբ ազը,
տաքտեղը կարդին լցնել և մեղմ կրակով տապակել:
Ավելի լավ կլինի, վոր սև թոքի և սպիտակ թոքի կեսե-
րը մի որ յեփե, մյուս որը մնացորդները: Վո՞րքան հա-
մով կլինի. տաք-տաք մարդ փափուկ լավաշի մեջ բըր-
դում անե ու խշտե: Ներսես-ախալար, յերբ յերեվակա-
յում ես, թուքդ չի^o վազում...

Ներսես-ախալարը լուս ու մունջ հետեւում եր բարե-
րար Նիկողոս-աղային և վերջինս յերբ հարցեր եր տա-
լիս ու նրա յերեսին մտիկ անում, Ներսես-ախալարը
գլուխը խոնարհեցնում եր համաձայնության նշան տա-
լու ձեռվ: Նիկողոս-աղան սպասում եր, վոր Ներսես-
ախալարը չնորհակալություն հայտնի, յերախտագի-
տությունն արտահայտի լեզվով ու վորոշ բառերով,
բայց Ներսեսն ամոթից ձայնն անդամ չեր կարողանում
բարձրացնել: Նիկողոս-աղան իր մի մե՛ծ բարիք գոր-
ծած, դարձյալ շարունակեց իր խրատական հորդորներն
ու տիրական հարցերը՝ Ներսես-ախալոր բերանից յե-
րախտագիտության խոռքեր լսելու մտքով. բայց Ներ-
սեսը խորասուզված դառն մտքերով, չեր ել ըմբռնում
Նիկողոս-աղայի ասածները:

Խե՛զմ Ներսես, ասում եր նա իր մտքում. մի ժա-
մանակ հարյուրավոր աղքատներ, կարոտյալներ, թըշ-
վառներ և ոտարականներ քո հովանու տակ պատսպա-
րան եյին գտնում, ուտում, խմում, կշտանում, հագըն-
գում և ծածկվում ու այնպես ճանապարհ ընկնում,
հարյուրավոր կարոտյալներ գործ եյին ճարում քո դու-
նը և ընտանիքներ ապրեցնում, ամեն մի դրացուդ ու
ծանոթիդ ու անծանոթիդ ոգնության եյիր հասնում




և վոչ վոքի մի որ յերախտագիտության նշան մտքովդ
անդամ չեր անցնում պահանջել, իսկ այսոր Ուռում-
Նիկողոսը, կարկատող Թողորի վորդին մի թոք առնե
ընտանիքդ կերակրելու համար, այդքա՞ն քարոզ կար-
դա գլխիդ և յերախտագիտություն պահանջե՞...

Մինչև տուն հասնելն ել ի՞նչ քարոզ չկարդաց Նի-
կողոս-ազան Ներսես-ախաղոր գլխին, ի՞նչ խրատներ
չավեց, վոր ժուժկալ լինի, քչով բավականանա, ուրի-
շի արած բարիքը դիտենա և վոչ-վոքի յերախտա-
պարտ չմնա: Նա ասում եր անդադար.

— Ի՞նչ մէծ բան ե, վոր տղայիդ ուղարկես մի որ
գա մեր աթարը կտրե, խո հոգին չի՞ դուրս գալ, ձեռ-
ները չի՞ չորանալ: Յես տանը մի քանի տեսակ ծառա-
ներ ունիմ. այնքան ձրիակերներ, հացկատակներ կան,
վոր կարիք չունիմ ուրիշ մարդու: Բայց թո՛ղ լինի,
պատիվ պահելը մեծ բան ե: Մի որ աղջկադ ուղարկե,
թող գա մեր տախտակները լվանա, ի՞նչ վնաս, խո մեջ-
քը չի՞ կոտրի: Մեր տունը խո գիտես, մի քանի տաս-
նյակ բան անողներ, աղախիններ կան, մեր սենյակնե-
րի հատակներն այնքան մաքուր և այնպես ճերմակ
են, վոր յեղ թափես կծողովվի առանց մի հատը տղ-
տոտելու կամ փչանալու. բայց իմ ասելը, միտքս ու-
րիշ ե: Պատիվ պահե, վոր պատիվդ բարձրանա: Յե-
թե քո կինը մի որ գա և մեր լվացքը լվանա, կամ
հացը յեփե, խո չի՞ մեռնիլ. բայց չե՞ վոր կինս նրա
պատիվը պիտի պահե, փոխադարձաբար նրա վրա իր
չնորհքը պիտի ավելացնե:

Նիկողոսը ճարպիկ մարդ եր, իսկ Կ. Պոլսում յեր-
կար ապրելով՝ լեզվել ու զելվել եր: Այնքան լեզու թա-
փեց, վոր խլացուց Ներսես-ախաղորը, վոր մտքում
ասում եր— «Յերանի, այսոր քեզ պատահած չլինեյի.
զլուխու ուտեր այս թոքը: Թո՛ղ ընտանիքս քաղցից կո-
տորվեր ու դու այս թոքն ինձ չտայիր տուն տանելու»:
Բայց Նիկողոսը խո՞ մարզարե չեր, վոր հասկանար
Ներսես-ախաղոր մտքիցն անցածն ու խոսքը փոխեր:
Նա միայն մի բանի եր ճպտում, վոր մարդիկ ասեն, խո-



ռեն, թե կա, չկա՝ Երգումում մի մարդ կա, այն ել Ու-
ուում-Նիկողոսն եւ և ամենքն ել յերախտազիտությամբ
խոնարհվին նրա առաջ:

Յերբ հասան Ներսես-ախոպոր դռան առաջ, Նիկո-
ղոս-աղան կանգնեց ու ասաց.—«Տանըդ տեղը շատ
լավ ե յեղել, բայց ափսո՞ս վոր շինողներն անտաշ կո-
պիտ մարդիկ են յեղել. այնպես չեն կարողացել շինել,
վոր դարերի գեմ կովի»: Ուզում եր այս խոսքերով ծակ-
ծկել Ներսեսի սիրու և իր մեծությունը, հեռատեսու-
թյունը ցույց տալ:

Յերբ Ներսես-ախոպարն արտորում եր տուն մտնել,
Նիկողոս-աղան ել ճար չգտավ նրան խոսեցնելու, առ
աց.

— Ցանկանում եմ բարի ախորժակ, համով ուսիս
տժվըժիկը:

— Շնորհակալ եմ, ասաց Ներսես-ախոպարը և ա-
րագ քայլերով ներս մտավ իր տունը, հազիվ աղատվե-
լով Նիկողոս-աղայի ձեռքից:

Մեծ եր Ներսես-ախոպոր ընտանիքը: Կինն արդեն
թանը պատրաստել եր, յելավ տժվըժիկն ել յեփեց,
նստան կերան և հազիվ կշտացած՝ սեղանից բարձրա-
ցան: Մեծ տան զավակներ, տնանկացած, թան ապու-
րով կամ տժվըժիկով մի՞թե կարելի եր նրանց կըշ-
տացնել... Բայց ամէն բան համբերությամբ տանում
եյին և ձայները մարդ չեր լսում:

Իրիկնադեմին, յերբ ծանր քայլերով ժամի կողմեն
եր գնում Ներսես-ախոպարը, վոր դիմե իր արարչին,
նրա ոգնությունը և վողորմությունը խնդրե—ճանա-
պարհին պատահեց Նիկողոս-աղան և ասաց.

— Բարի իրիկուն, Ներսես-ախոպար, քեֆդ, հալդ
ի՞նչպես ե. ինչպես նկատում եմ՝ առույգ-առույգ ես
փոխում քայլերդ, յերիտասարդի ուժ ես ստացել: Ի՞նչ-
պես եր տժվըժիկը, համով եր, կարգին տապակե՞ց
քույրս...

— Շատ որինավոր, աղա ջան, շատ շնորհակալ եմ,
տունս, բոլորս ել շատ շնորհակալ ենք,—արագ-արագ



պատասխանեց Ներսես-ախպարը, վորպեսզի Նիկողոս-աղան տժվըժիկի մասին խոսքը թողնե, ուրիշ բանից խոսե, վոր չլինի թե ժամավորները լսեն և նա անարդ-վի, պատիվը վիրապորվի:

— Յերեկի լավ ախորժակով ես կերել. կարծես թար-մացել ես, զույնդ մինչև անդամ փոխվել ե, խո աղը, տաքդեղը, տապակվածքը կարգի՞ն եր,— ասաց զվար-թորեն Նիկողոս-աղան, առանց նկատողության առ-նելու, վոր իր ձայնը փողոցից անց ու դարձ անողները լսում եյին և Ներսես-ախպարը զայրույթից կուչ յե-կած՝ կարծես ուղում եր, վոր դետինը ճեղքվի և ինքը մեջն ընկնի:

— Ամեն բան, ամեն ինչ կարգին եր,— ասաց կակա-զելով Ներսես-ախպարը, վորպեսզի մի կերպ վերջ տա-այդ խոսակցության, բայց Նիկողոս-աղան անպատ-ճառ ուղում եր, վոր այն որվա ժամավորները բոլորն եկ լսեյին, թե ինքը մի տասը փարանոց թոք և վողորմա-ցել իր դրացում՝ Ներսես-ախպարը:

— Վողորմած հոգի մայրս, ասաց խոսքը շարունա-կելով Նիկողոս-աղան, խիստ լավ տժվըժիկ եր յեփում. այնպես պատվական, վոր յերբ դռնով տուն եյիր մըտ-նում, նրա տապկոցի անուշ հոտից կշտանում եյիր: Այնպես համեղ եր լինում, վոր նրա մահից հետո կա-րոտ եմ մնացել մի համեղ տժվըժիկի: Ափսո՞ս, հները մեռան, իրենց հետ կարգն ու սարքը գերեզման տարան: Քանի՞-քանի անդամներ ախորժակս գրգռվել ե, սիրտս ուզել ե մի համեղ տժվըժիկ, բայց յե՞րբ կարող են հի-միկվաններն այնպիսի քաղցրաբույր կերակուր յեփել: Բայց քույրս (քո կինը), նորերից չե, նա կտրծում եմ, վոր լավ անարար պիտի լինի և համոզված եմ, վոր քեզ այսոր անվոխարինելի պատվական տժվըժիկ կերցրած ե. խո սխալված չե՞մ: Հը՛, լավն եր, չե՞— ասաց ժա-մի գավթում կանդնելով Նիկողոս-աղան, աչքերն ուղ-ղելով Ներսես-ախպար յերեսին:

— Ի՞նչպես չե, ի՞նչպես չե, հրաշալի յեր, ասաց Ներսես-ախպարը և շտապեց յեկեղեցի: Բայց յեկեղե-



շում փոխանակ աղոթելու, փոխանակ փառաբանելու,
սկսեց գանգատվել իր տիրոջից, թե բավական չեր, վոր
նրան այդ վիճակի մեջ եր զցել, բավական չեր, վոր նա
այդքան զրկանքների և անարգանքների եր մտանել, իսկ
այժմ ել տանջվում եր Նիկողոսի նման մի փառասերի
ձանկում:


Հետեւյալ առավոտ բազար եր գնացել Ներսես-ախ-
պարը: Սիրոը մի Փինջան սուրճ խմել ուզեց ու մտավ
սրճարան: Կային այնպիսի բարի հոգիներ, վորոնք նրա
անցկացրած փառքի որերից քաջ տեղյակ լինելով, ա-
ռանց նկատելու, միայն մի ակնթարթով ղայփաջուն
իմացնում եյին, վոր մի Փինջան սուրճ տա Ներսես-
ախպորը: Այնպես վոր առանց մարդ իմանալու, ա-
ռանց մեկի մյուսի գիտենալուն, սա, նա, մի-մի Փին-
ջան սուրճով պատվում եյին տնանկին և նա վորպես
իր գրպանից վճարելով, պատվավոր կերպով հեռա-
նում եր սրճարանից: Սովորականի համաձայն, յերբ
սկսեց սուրճը խմել, Նիկողոս-աղան մտավ սրճարան
և անմոռունչ բարեկելով նստավ Ներսես-ախպոր դիմաց:
Ներսեսի սուրճը քթից յեկավ: Նա զգաց, վոր Նիկո-
ղոսը անպատճառ իր բարերարության խոսքը բանալու
ե, այն ել հրապարակով: Յեվ իսկապես, սուրճի Փին-
ջանը ձեռքին, չիրուխի ծխախոտը ծխելով՝ ասաց Նի-
կողոս-աղան.

— Հը՛, ի՞նչպես ես, Ներսես-ախպար, յերեկ լավ
ախորժակով վայելեցի՞ք տժվըժիկը, համո՞վ եր, հը՛:
Մարդու քեֆը կզա, յերբ սրտի ուզածին պես պատ-
րաստեն կերակուրը:

— Ինչպես չե, ինչպես չե, — կմկմաց Ներսես-ախ-
պարը, հուսալով, վոր Նիկողոս-աղան իր պատվից
կամաչե և չի պարզի թոքի պատմությունը, թեև սիր-
տը բորբոքումից արդեն սկսել եր արագ-արագ թըր-
թուալ:

— Այդ ի՞նչ տժվըժիկ ե, — մեջ ընկավ սրճարանի
պարապ հյուրերից մինը:

— Վոչինչ, — ասաց Նիկողոս-աղան, ծանրացնելով



խոսքը. — յերեկ մեր մսագործի մոտ մի լավ թոք տեսա. սիրտս ուզեց, առա, վոր տուն ուղարկեմ, բայց ափոս-սացի, վորովհետեւ մեր տնեցին կարդին չի կարող ու-զածո տժվրժիկը յեփել: Այդ մտմտուքի մեջ ելի, վոր պատահեց Ներսես-ախապարը, իսկույն տվի նրան: Ասի, մեկ չե՞ մեր տուն զրկած, ձեր տուն զրկած: Փա՛ռք աստծու, մենք դրացիներ ենք, զոկողություն յերեք դրել չենք իրար մեջ, իմ ու քո յե՞ ըք և մտել մեր մեջ, ո՞վ և վնտուել: Մենակ քեֆս յեկավ, յես հավատացած եմ, վոր քույրս չեր փշացնի այն պատվական թոքը, կարդին բան կեփեր: Իմ ուզածն ել այն ե, վոր բանը տեղն առնե ու լազաթ ունենա: Մեր տուն վոր զրկեյի՝ դահրումար ելք դառնալու, ո՞վ կարող եր թիքա տառել: Լավ բան սիրում եմ, զիտեմ, վոր քույրս այնպէ՞ս տապ-կած կլիներ, վոր Ներսես-ախապարը համից, հստից հարբած՝ մատներն ել խածոտած կլինի տժվրժիկի պատառների հետ: Դե՛ս, այժմ շարունակությունը զու պատմե, Ներսես-ախապար, յես իմո պրծած:

— Ե՛ս, ի՞նչ պատմեմ, չնորհակալ եմ, յեփեցինք, կերանք, պրծանք, զնաց, — ասաց Ներսեսը կարմրելով: — Անուշ լինի՛, խոսքս դրա մասին չեր: Ուզում եյի խմանալ, թե կարգի՞ն եր տապկած տժվրժիկը, հա-մո՞վ եր:

— Շա՞տ համեղ, շա՞տ ախորժելի, — ասաց սիրու մորմոքելով Ներսես-ախապարը վողջ անձով քրտնած, թրջված:

— Այդ հասկանում եմ, մարդ ուզածը գտնե, տեղո-վը, տեղակի:

Ներսես-ախապարը դուրս յեկավ, այլևս կիրքը չկա-րողանալով զսպել, բայց Նիկողոսին ել հաճելի յեր, վոր ամեն տեղ տժվրժիկի պատմությունը խոսվի, վոր-տեղ վոր պատահեր, ուր վոր հանդիպեր, խոսքը տըժ-վրժիկի մասին պիտի բանար, կամ այդ մասին հարցեր պիտի տար:

— Ներսես-ախապար, Հիշո՞ւմ ես թոքը, կամ թե՝ «ի՞նչպես համեղ եր տժվրժիկը»: Վոր քաղաքը տժվր-

ժիկի ցավն ընկավ, Նիկողոսն ամեն տեղ պատմեց ու խոսեց:

Անցավ մի շաբաթ, մի ամիս, յերեք ամիս, վեց ա-միս, վերջապես տարի, բայց Նիկողոս-աղան, վորտեղ պատահեր՝ պիտի հիշեցներ Ներսեսին թոքը և տժվրժի-կը — թե՛ փողոցում, թե՛ յեկեղեցու գավթում, թե՛ սըր-ճարանում, թե՛ բաղնիսում, թե՛ հարսանիքում, թե՛ վերջապես ժողովներում, այնպես վոր հազար անդամ Ներսես-ախապոր քթից, պնչից դուրս յեկավ Նիկողոս-աղայի զնած թոքի տժվրժիկը: Ել համբերությունը սպառած, մի որ նույն մսագործի խանութի դռան ա-ռաջ կանգնած, վերարկվի տակ մի բան թագցրած՝ սպառում եր Ներսես-ախապարը: Դեպքն այնպես բերեց, վոր Նիկողոս-աղան ել այնտեղ յեկավ իրենց ծառայի հետ միս առնելու և նկատելով Ներսես-ախապորը, ասաց.

— Ներսես-ախապար, ինչպե՞ս ես, լա՞վ ես: Հիշո՞ւմ ես այն թոքը, այն համեղ տժվրժիկը...

— Ահա ա՛ռ քո թոքը և ձա՛յնդ կտրե, — ասաց զայ-րացած Ներսես-ախապարը և աբայի տակ թագցրած թո-քը դուրս հանելով, այնպես շմփացրեց Նիկողոս-աղա-յի քթին, բերանին, վոր վերջինս ապուշ դարձավ, տեղն ու տեղը մնաց, յերեսը, գլխի թանկաղին շալը, վիզը արյունով ներկված:



БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

Պատ . իսմբագիր՝ Ա . Զարյան
Տեխ . իսմբագիր՝ Ան . Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա . Փարսաղանյան

Գլուխոկ լիսկոր՝ Կ—4639 . Հրամ . 4282 . Պատվեր 1132 .
Տիրաժ 5000 . Թուղթ 62×94 . Տպագրական 1 1/8 մամ . Մեկ մամ-
մուլում 30720 հիշ . Հեղինակ . 3/4 մամ .
Հանձնված և աբտագրության 15/IX—37
Առողջապահ և տղագրության 25/XI—37
Գինը 60 կրտ .

ՀՀ Ազգային գրադարան



NL0392799

183

7098

916C 60 4.

ВО52401

А Т Р П Е Т
Т Ж В Ж И К
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.

наука и техника